



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ



Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2018թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 70

Ձեռնարկողը՝

<<ՈՐՈՏԱՆ ՀԻԴՐՈ>> ՍՊԸ

Սյունիքի մարզ, գ. Խնձորեսկ, 4-րդ փող. տ.2

Գործունեությունը՝

<<Որոտան-1>> ՓՀԷԿ-ի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Սյունիքի մարզի

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿի տնօրենի ժ/պ՝



Ռ. Ոսկանյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 70

<16> 08 2018թ.

**<<Որոտան-1>> ՓՀԷԿ-ի կառուցման շրջակա միջավայրի վրա
ազդեցության նախնական գնահատման հայտ**

Ձեռնարկող՝ <<ՈՐՈՏԱՆ ՀԻԴՐՈ>> ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ /Գ կատեգորիա/
Տեղադրման վայրը՝ Սյունիքի մարզ, Գորայք համայնք

<<ՈՐՈՏԱՆ ՀԻԴՐՈ>> ՍՊ ընկերությունն անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականներով (սեփականության իրավունք, սերվիտուտ) ամրագրված՝ էներգետիկայի և գյուղատնտեսական նպատակային նշանակության հողատարածքների սահմաններում նախատեսում է կառուցել <<Որոտան-1>> ՓՀԷԿ-ը (որի համար ԲՆ ՋՌԿԳ-ի կողմից 09.11.2017թ տրամադրվել է թիվ 000240 ջրօգտագործման թույլտվություն):

Նախագծված <<Որոտան-1>> ՓՀԷԿ-ի կառուցվածքների տարածքը գտնվում է Սյունիքի մարզի հարավային մասում, Գորայք համայնքի վարչական սահմաններում՝ Որոտան գետի վերին հոսանքներում: ՓՀԷԿ-ի երկու գլխային հանգույցները նախագծվել են Որոտան գետի և նրա ձախակողմյան վտակի վրա՝ ակունքներից մոտ 5-7կմ ներքև: Գլխային հանգույց-1-ը նախատեսվում է Որոտան գետի վրա, իսկ գլխային հանգույց-2-ը՝ ձախ վտակի վրա: ՓՀԷԿ-ն օգտագործելու է համապատասխանաբար՝ Որոտան գետի անկումը 2610.0մ նիշից մինչև 2395.6մ նիշը, իսկ ձախ վտակի անկումը՝ 2550մ նիշից մինչև 2395.6մ նիշը: Այդ անկումներն էներգետիկ նպատակով օգտագործելու համար, երկու գետերի մնացորդային ելքերը ճնշումային խողովակաշարերի միջոցով /Որոտան գետի երկայնքով խողովակաշարի երկարությունը 4580մ է, նրա ձախ վտակի երկայնքով՝ 3700մ/ կմոտեցվեն ՓՀԷԿ-ի կայանային հանգույցին, որը նախատեսվում է տեղակայել գետի և վտակի միացման տեղամասում՝ 2395.6մ նիշում: <<Որոտան-1>> ՓՀԷԿ-ը ունենալու է հետևյալ ջրաէներգետիկ ցուցանիշները.

- Հաշվարկային հզորություն ընդհանուր՝
- Հաշվարկային ելք ընդհանուր՝
- Որոտան գետի ճյուղ
- Ձախակողմյան վտակի ճյուղ
- Հաշվարկային ճնշում՝



- Որոտան գետի ճյուղ - 187.1մ
 - Ձախակողմյան վտակի ճյուղ - 128.9մ
- Միջին տարեկան արտադրված էլեկտրաէներգիայի քանակ՝ 14.776 մլն.ԿՎտ/ժ,

որից՝

- Որոտան գետի ճյուղ - 11.582 մլն.ԿՎտ/ժ
- Ձախակողմյան վտակի ճյուղ - 3.194 մլն.ԿՎտ/ժ

Ագրեգատների քանակ՝ 4 հատ, որից 2-ը Որոտան ճյուղի համար, 2-ը՝ ձախակողմյան վտակի:

Որոտան գետը հանդիսանում է Արաքս գետի ձախակողմյա ամենախոշոր վտակներից մեկը, տիպիկ լեռնային է՝ չափազանց անհավասարաչափ ելքերով: Գետի սնուցման հիմնական աղբյուրը ձնհալքի ջրերն են: Հայաստանի տարածքում գետի երկարությունը 129կմ է, ջրհավաք մակերեսը՝ 2020 կմ², միջին թեքությունը՝ 21%, ջրհավաքի միջին բարձրությունը՝ 2280մ: Որոտան գետի և ձախակողմյա վտակի առավելագույն ելքերը դիտվում են հիմնականում գարնանային վարարումների ժամանակ:

<<Որոտան-1>> ՓՀԷԿ-ի Որոտան գետի վրա (գլխային հանգույց-1) հաշվարկային գետահատածքում գետի ջրհավաքի մակերեսը կազմում է 49.2կմ², իսկ ՓՀԷԿ-ի ձախակողմյան վտակի վրա (գլխային հանգույց-2) գետի ջրհավաքի մակերեսը կազմում է 15.2կմ²: <<Որոտան-1>> ՓՀԷԿ-ի ջրաէներգետիկական հաշվարկների համար օգտագործվել է Որոտան-Գորհայք գետահատածքում 60 տարվա տասնօրյակային ելքերի շարքը, ինչը հանդիսացել է որպես հիմք <<Որոտան-1>> ՓՀԷԿ-ի ջրաէներգետիկական ցուցանիշների հաշվարկների համար, որոնք իրականացվել են 50% ապահովվածության տարվա համար: Միջին տասնօրյակային դիտարկված նվազագույն ծախսն ըստ Որոտան գետի Բորիսովկա դիտակետի (1980թ., հոնվարի առաջին տասնօրյակ) կազմում է 1.85մ³/վրկ, իսկ Որոտան գետի Գորայք դիտակետում այն կազմում է 1.09մ³/վրկ: Երկու հաշվարկային ուղղահատածքներում հոսքի նորմաները համապատասխանաբար կազմում են՝ 1.25մ³/վրկ և 0.39մ³/վրկ, իսկ գ.Որոտան-դ.Գորհայք ջրաչափական կայանի համար այն կազմում է 3.91մ³/վրկ: Երկու հաշվարկային ուղղահատածքներում բնապահպանական ելքերի մեծությունները հաշվարկվել են հիմք ընդունելով՝ ՀՀ Կառավարության 2018թ հունվարի 25-ի N 57-ն որոշումը, համաձայն որի՝ բնապահպանական թողքերի առավելագույն և նվազագույն արժեքները համապատասխանաբար Որոտան գետի համար կազմում են՝ 0.72մ³/վրկ և 0.27 մ³/վրկ, իսկ ձախ վտակի համար՝ 0.23մ³/վրկ և 0.09մ³/վրկ: Ջրատնտեսական հաշվարկներում <<Որոտան-1>> ՓՀԷԿ-ի հաշվարկային ելքը Որոտան գետի համար ընդունվել է 3.0մ³/վ, իսկ Ձախ վտակի համար՝ 0.8մ³/վրկ: ՓՀԷԿ-ի ջրառ հանգույցներից ներքև, մինչև կայանային հանգույց ոռոգման և այլ նպատակներով ջրառներ չեն իրականացվում:

<<Որոտան-1>> ՓՀԷԿ-ի նախագծված բոլոր կառույցների տեղամասերի ճարտարագիտակերպարանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքների իրականացման համար: Նախագծվող հիդրոտեխնիկական կառույցների տակ հողօգտագործումը կկազմի ընդամենը 8.55հա, որից՝ 3.36հա-ը ժամանակավոր օգտագործման համար են: Շինարարական աշխատանքների համար հիմնականում օգտագործվելու է գոյություն ունեցող ճանապարհները: Ճնշումային խողովակաշարերի կառուցման և սպասարկման համար անցկացվելու է 4.5մ լայնությամբ ճանապարհներ, որոնց աշխատանքները նախատեսված են նախագծում և ներառված են ընդհանուր հողային աշխատանքների ծավալների մեջ:

Նախագծված <<Որոտան-1>> ՓՀԷԿ-ն իր մեջ ներառում է հետևյալ կառուցվածքները.



1. Գլխամասային հանգույց Որոտան գետի վրա (գլխային հանգույց-1)
2. Աջակողմյա դերիվացիոն խողովակաշար՝ 4.5կմ երկարությամբ, 1.2մ տրամագծով
3. Գլխամասային հանգույց ձախակողմյա վտակի վրա (գլխային հանգույց-2)
4. Ձախակողմյա դերիվացիոն խողովակաշար՝ 3.70կմ երկարությամբ, 0.7մ տրամագծով
5. Կայանային հանգույց
6. Հեռացնող ջրանցք, որով ագրեգատների օգտագործած ջուրը վերադարձվում է գետ:

<<Որոտան-1>> ՓՀԷԿ-ի Որոտան գետի գլխային հանգույցն իր մեջ ներառում է ջրթափային պատվար (որն ունի 2.5-3.0 մ մաքուր բարձրություն և 20 մ ջրթափային ճակատ և նախատեսված է 2610.0 մ նիշով նորմալ դիմհարային մակարդակ ստեղծելու և հեղեղային ելքերի բաց թողնման համար), ջրընդունիչ՝ համատեղված տղմագտարանի հետ (3.0մ³/վրկ հաշվարկային ելքի ընդունման համար): Տղմագտարանում ջուրը մաքրվում է կախյալ ջրաբերուկներից: Ջրընդունիչ կառուցվածքի վրա նախատեսված են ճաղավանդակներ, իսկ դերիվացիայի ջրընդունիչի վրա՝ ձկնապաշտպան մանր ճաղավանդակ՝ 2.0սմ լայնության բացվածքով: Ջրընդունիչ կառուցվածքում նախատեսվում է ջրաչափական սարքավորումներ:

Ձկնուղին նախատեսված է գլխային հանգույցի աջ ափին, ջրթափային պատվարին կից: Ձկնուղու ընդհանուր երկարությունը 37.0մ է, մաքուր լայնությունը՝ 1.5մ: Այն աստիճանաձև է, կազմված՝ մուտքամասից, ելքամասից, 11 բաժանմունքից (յուրաքանչյուրը՝ 3.0մ մաքուր երկարությամբ, 0.45մ աստիճանների բարձրությամբ, 1.5մ լայնությամբ): Ձկնուղին նախատեսված է ապահովելու՝ իխտիոֆաունայի ազատ անցումը հիդրոհանգույցի ներքին բիեֆից վերին բիեֆ և հակառակ ուղղությամբ, ինչպես նաև բնապահպանական առավելագույն՝ 0.72մ³/վրկ և նվազագույն՝ 0.27մ³/վրկ ելքերի բացթողումը ներքին բիեֆ:

<<Որոտան-1>> ՓՀԷԿ-ի ձախակողմյան վտակի գլխային հանգույցն իր մեջ ներառում է ջրթափային պատվար (որն ունի 2.0-2.5 մ մաքուր բարձրություն և 12 մ ջրթափային ճակատ և նախատեսված է 2550.0 մ նիշով նորմալ դիմհարային մակարդակ ստեղծելու և հեղեղային ելքերի բաց թողնման համար), ջրընդունիչ՝ համատեղված տղմագտարանի հետ (0.8մ³/վրկ հաշվարկային ելքի ընդունման համար): Տղմագտարանում ջուրը մաքրվում է կախյալ ջրաբերուկներից: Ջրընդունիչ կառուցվածքի վրա նախատեսված են ճաղավանդակներ, իսկ դերիվացիայի ջրընդունիչի վրա՝ ձկնապաշտպան մանր ճաղավանդակ՝ 2.0սմ լայնության բացվածքով: Ջրընդունիչ կառուցվածքում նախատեսվում է ջրաչափական սարքավորումներ:

Ձկնուղին աստիճանաձև է, նախատեսված է գլխային հանգույցի աջ ափին, ջրթափային պատվարին կից: Ձկնուղու ընդհանուր երկարությունը 34.0մ է, մաքուր լայնությունը՝ 1.4մ: Այն կազմված է մուտքամասից, ելքամասից, 10 բաժանմունքից (յուրաքանչյուրը՝ 3.0մ մաքուր երկարությամբ, 0.45մ աստիճանների բարձրությամբ, 1.5մ լայնությամբ): Ձկնուղին նախատեսված է ապահովելու իխտիոֆաունայի ազատ անցումը հիդրոհանգույցի ներքին բիեֆից վերին բիեֆ և հակառակ ուղղությամբ, ինչպես նաև բնապահպանական առավելագույն՝ 0.23մ³/վրկ և նվազագույն՝ 0.09մ³/վրկ ելքերի բացթողումը ներքին բիեֆ:

Երկու ձկնուղիների մուտքամասի բարձունքային նիշը ջրընդունիչի նիշից նախազգույշ է ցածր՝ ապահովելու համար բնապահպանական հոսքի մուտքի առաջնահերթությունը: Ձկնուղիների մուտքամասում տեղակայվելու է փական, որով կարգավորվելու է գետ բաց



թողնվող բնապահպանական ելքը: Փականի վրա տեղադրվելու է ջրաչափական սարք, որով հնարավոր կլինի ամսական բնապահպանական ելքի մեծությունների տվյալները հաշվառելու և առցանց փոխանցելու համար: Ձկնուղու մուտքամասում ջրի հոսքի արագությունը 0.25մ/վրկ է: Ձկնուղիների չափերը նախագծվել են հաշվի առնելով Որոտանի օգտագործվող գետահատվածին բնորոշ ձկնատեսակները:

<<Որոտան-1>> ՓՀԷԿ-ի համար կառուցվող երկու ճյուղերի խողովակաշարերը մետաղական են, տեղադրվելու են խրամուղում՝ հիմնականում գոյություն ունեցող ճանապարհի եզրով: Խողովակաշարերը ծածկվում են հակադարձ լիցքով՝ 1.0 մ-ից ոչ պակաս բարձրությամբ: Ավելցուկային գրունտը խողովակաշարի խրամուղու տեղադրման աշխատանքներից հետո տեղում հարթեցում է, իսկ հողային աշխատանքներից առաջացած բուսահողը՝ առանց պահեստավորման օգտագործվելու է տարածքների վերականգնման համար: Խողովակաշարի անցկացման ուղեգծում ծառափուտային բուսականությունը բացակայում է:

Հեռացնող ջրանցքի միջոցով կայանում աշխատած ջուրը թափվում է Որոտան գետ: Այն սկիզբ է առնում անմիջապես ՓՀԷԿ-ի շենքից, կունենա մոտ 35մ երկարություն:

ՓՀԷԿ-ի շենքում նախատեսվում է տեղակայել Պելտոն տիպի չորս հիդրոագրեգատներ՝ համալրված սինխրոն գեներատորով (Որոտանի ճյուղի համար՝ 2x2400կՎտ, ծախսակողմյա վտակի ճյուղի համար՝ 2x450կՎտ), բաց բաշխիչ սարքավորումներ, որտեղ կատարվում է լարման տրանսֆորմացիա՝ արտադրված էլեկտրաէներգիան բարձր լարման գծերով ընդհանուր էներգահամակարգին փոխանցելու համար: Ենթակայանում նախատեսված է երկու ուժային տրանսֆորմատորներ (6300կՎԱ և 1000կՎ հզորությամբ, 35/6կՎ լարմամբ):

Տրանսֆորմատորներից յուրի արտահոսքի համար հատակային մասում նախատեսված է առվակ, որտեղով յուրը հեռացվում է յուղահավաք բաք, որը ժամանակ առ ժամանակ պետք է մաքրվի սահմանված կարգով:

Շահագործման փուլում <<Որոտան-1>> ՓՀԷԿ-ի շենքում սպասարկող անձնակազմի համար խմելու և տնտեսակենցաղային կարիքների համար օգտագործվող ջուրը, (0,125խոր.մ/օր ծավալով) բերովի է: Կենցաղային կեղտաջրերի հեռացումը (որի ծավալը կկազմի 0,122խոր.մ/օր) իրականացվելու է անջրթափանց հորի միջոցով, որը պարբերաբար մաքրվելու է սահմանված կարգով:

Հայտում վերլուծվել և որոշվել է <<Որոտան-1>> ՓՀԷԿ-ի կառուցման արդյունքում շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր ազդեցության շրջանակները և մշակվել են միջոցառումներ՝ գործունեության ենթակա տարածքներում շրջակա միջավայրի բաղադրիչների (հող, ջուր, մթնոլորտային օդ և կենսաբազմազանություն) վրա հնարավոր վնասակար ազդեցությունները կանխարգելելու, նվազեցնելու և փոխհատուցելու նպատակով: Ազդեցությունների վերլուծությունը գնահատվել է ինչպես շինարարության, այնպես էլ շահագործման փուլերում:

Շինարարության համար բերվող խողովակների հատվածները, հանգույցները, ե/բ հիմնակմախքը և այլն, նախատեսվում է շինհրապարակ բերել բազաներից՝ անմիջապես տեղադրելու համար, հնարավորինս պետք է բացառվեն նրանց պահեստավորումը տեղում:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում առաջացող ազդեցությունների (փոշի, աղմուկ, շինարարական աղբ) մեղմացման համար նախագծում նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, այդ թվում՝



- չոր եղանակներին շինհրապարակի, պահեստավորված հողային զանգվածների խոնավացում,

- հողային աշխատանքների իրականացում՝ փոշեռսիչ հորատող սարքավորումներով,

- շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի վերահսկում,

- վառելիքաքսուկային, կամ այլ նյութերի շահագործման կանոնների պահպանում,

- շինարարական աշխատանքների ավարտից հետո շինհրապարակների մաքրում և խախտված տարածքների վերականգնում:

Համաձայն ներկայացված նախագծի՝ շինարարության փուլում, Որոտան ճյուղի կառույցների (գլխային հանգույց, դերիվացիա, ճանապարհներ) տակ ընկած հողային աշխատանքներից առաջացող բուսաշերտի ծավալը գնահատվել է 5550մ³, որի պահպանության համար պահանջվող ծախսերը կազմում են 16350 հազ. ՀՀ դրամ: Իսկ ծախս ճյուղի կառույցների իրականացման համար հողային աշխատանքներից առաջացող բուսաշերտի ծավալը գնահատվել է 4600մ³, պահպանության համար պահանջվող ծախսերը՝ 13575 հազ. ՀՀ դրամ: Բուսաշերտը պետք է օգտագործվի տարածքների վերականգնման համար, իսկ մնացորդային զանգվածները կօգտագործվեն կայանային հանգույցի տարածքի կանաչապատման համար: Հողային աշխատանքներից առաջացող մնացորդային գրունտը Գորայք համայնքի ղեկավարի հետ համաձայնեցված սահմանված կարգով կհեռացվի 4 կմ հեռավորության վրա գտնվող աղբավայր, կամ կօգտագործվի շրջակա տարածքների բարելավման համար:

Նախագծում վերլուծվել է նաև գործունեության իրականացման արդյունքում կենսաբազմազանության բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունները և առաջարկվել են դրանց մեղմացմանն ուղղված միջոցառումներ: Շինարարական աշխատանքների իրականացման համար մշակվել է ժամանակացույց և պլան, որի կիրառմամբ հնարավորություն կստեղծի նվազագույնի հասցնելու կենդանատեսակների վրա բացասական ազդեցությունը: Համաձայն նախագծային տեղեկատվության՝ անմիջապես ՓՀԷԿ-ի կառուցվածքների և շինհրապարակների տարածքներում ներկայացված էկոհամակարգերը հազվագյուտ չեն, ինտենսիվ արածեցման հետևանքով խախտված են, ՀՀ Կարմիր գրքում գրանցված կենսաբազմազանության տեսակներ չեն աճում /հիմք՝ ՀՀ ԳԱԱ Ա. Լ.Թախտաջյանի անվան Բուսաբանության ինստիտուտի երկրաբուսաբանության բաժնի վարիչ, կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր՝ Գ. Մ. Ֆայվուշ/:

ՀԷԿ-ի կառույցների տարածքներում բացակայում են ծառափուտային բուսականությունը: Գործունեության ենթակա, կամ Հարակից տարածքներում բացակայում են պատմամշակութային հուշարձանները, կամ բնության հատուկ պահպանվող տարածքները:

ՀԷԿ-ի շենքի կառուցման աշխատանքների ավարտից հետո կայանային հանգույցի տարածքը մետաղյա ցանկապատով ցանկապատվելու է, իսկ կառուցապատումից ազատ տարածքը բարեկարգվելու և կանաչապատվելու է՝ տվյալ լանդշաֆտին բնորոշ ծառատեսակներով և թփուտներով: Կանաչապատման համար օգտագործվելու է՝ բարդու տնկիներ, Գիհի սովորական, ուռենի, մասրենի: Ծառատունկը կատարելուց հետո ձեռնարկողը պարտավորվում է ապահովել տնկարկների խնամք՝ հետագա 4 տարիների ընթացքում:

Նախագծում բնապահպանական միջոցառումների իրականացման ծախսերը գնահատվել են 70665 հազ. ՀՀ դրամ, որի մեջ մտնում են՝ Որոտան գետում և ճախ



վտակում ձկնապաշտպան միջոցառումների իրականացման, փոշենստեցման, ռեկուլտիվացիայի, տարածքի բարեկարգման, կանաչապատման և այլ ծախսեր:

Շահագործման փուլում գետային էկոհամակարգի պահպանության հիմնական միջոցառում է հանդիսանում Որոտան գետի և ծախ վտակի համար սահմանված բնապահպանական ելքերի չափաքանակների ապահովումը (որը Որոտան գետի համար առավելագույնը ընդունվել է 0.72մ³/վրկ, նվազագույնը՝ 0.27մ³/վրկ, իսկ ծախ վտակի համար, համապատասխանաբար՝ 0.23մ³/վրկ և 0.09 մ³/վրկ):

Նախագծային փաստաթղթերի վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով 17.05.2018թ Սյունիքի մարզի Գորայք համայնքում անցկացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում մասնակիցների կողմից գործունեության իրականացումն արժանացել է հավանության: Քննարկումների ընթացքում բարձրացվել են հարցեր, կապված՝ Որոտան գետում ձկների առկայության, ձկնագողության և «Որոտան-1» ՓՀԷԿ-ի շահագործման փուլում բնապահպանական ելքի ապահովման հետ: Հարցադրումների վերաբերյալ ներկայացվեցին բավարար տեղեկատվություն և հիմնավորումներ: Քննարկումների ընթացքում ընկերության տնօրենն իր պատրաստակամությունն հայտնեց ՀԷԿ-ի կառուցապատման ընթացքում ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխանության, բոլոր նախագծային լուծումների ապահովմանն ուղղված աշխատանքների իրականացումը, տեղեկացրեց նաև, որ մասնակցելու են համայնքի սոցիալական խնդիրների լուծմանը (այդ թվում գյուղական ճանապարհի վերանորոգում, ֆինանսական հատկացումներ համայնքային բյուջե և այլն):

Փորձաքննության գործընթացում նախնական գնահատման հայտը վերադարձվել է ձեռնարկողին լրակազմման, հաշվի է առնվել նաև փորձաքննական գործընթացում ներգրավված փորձագետի դիտողությունները:

Ամփոփելով գնահատման և փորձաքննության արդյունքները, կարելի է եզրահանգել, որ նախագիծը մշակվել է ՀԷԿ-երին ներկայացվող շինարարական նորմերին և բնապահպանական օրենսդրական պահանջներին համապատասխան: Համաձայն նախագծային լուծումների բացասական ազդեցությունները շրջակա միջավայրի վրա թույլատրելի նորմերի սահմաններում են:

Փորձաքննական պահանջներ

1.Քանի որ «Որոտան-1» ՓՀԷԿ-ի աշխատանքային նախագծում վերանայվել են ջրատնտեսական հաշվարկները, բնապահպանական թողքի չափաքանակները հաշվարկվել են ՀՀ Կառավարության 2018թ հունվարի 25-ի N 57-ն որոշման պահանջներին համապատասխան, անհրաժեշտ է մինչև գործունեության իրականացումը ստանալ նոր Զրոգտագործման թույլտվություն:

2. Շինարարության և շահագործման փուլերում ՀԷԿ-ի ջրօգտագործման պայմանների կատարումը հսկելու համար, մինչև իրականացումը անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կատարել ջրօգտագործման ծավալների հաշվառման, դրանց առցանց տեղափոխման և հասանելիության ապահովման աշխատանքներ՝ երկու ջրատների կետերը ջրաչափական դիտակետերով ու կապարակնքված ջրաչափերով ապահովելու միջոցով: (հիմք ընդունելով ՀՀ ջրային օրենսգրքի 32-րդ հոդվածի պահանջները):



3. Շահագործման փուլում, օգտագործվող գետահատածքներում բնական միջավայրի և կենսաբազմազանության պահպանման, ինչպես նաև բնապահպանական թողքերի ամսական ջրաքանակների ապահովման և վերահսկման համար, անհրաժեշտ է՝ բնապահպանական թողքերի երկու կետերն ապահովել ջրի մակարդակի ավտոմատ կառավարման և տվյալների առցանց հաղորդման ջրաչափական սարքավորումներով:

4. Շինարարության և շահագործման փուլերում առաջացող՝ շինարարական աղբի և տարբեր տեսակի թափոնների (այդ թվում նաև վտանգավոր թափոններ՝ տրանսֆորմատորային յուղ, բանեցված յուղեր, քսայուղեր և այլն) տեղադրումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել «Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ համապատասխան համաձայնեցումների առկայության դեպքում (մինչև շինարարական աշխատանքների մեկնարկը):

5. Շինարարական և շահագործման փուլերում գետի էկոհամակարգի և ցամաքային տարածքների բնական բաղադրիչների (հող, ջուր, օդ, կենսաբազմազանություն) պահպանման և հնարավոր ազդեցությունների կանխարգելման համար անհրաժեշտ է ապահովել բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի իրականացումը, ինչպես նաև օգտագործվող գետահատվածում սանիտարա-հիգիենիկ վիճակի պահպանումը:

6. Մինչև գործունեության իրականացումն անհրաժեշտ է Գորայք համայնքի ղեկավարի կողմից ստանալ թափոնների հեռացման վայրերի վերաբերյալ համապատասխան թույլտվություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՈՐՈՏԱՆ ՀԻԴՐՈ» ՍՊԸ կողմից ներկայացված «Որոտան-1» ՓՀԷԿ-ի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Տնօրենի տեղակալ

Գլխավոր մասնագետ



Ա. Դոնոյան

Հ. Մկրտչյան